

Telcell վճարումների ընդունման տերմինալների միջոցով վարկերի մարման ուղեցույց

Դուք վճարումը կատարում եք տերմինալի էկրանին ձեռքի պարզ հպումով: Ամեն ինչ շատ հեշտ է, անհրաժեշտ է ընդհամենը հետևել սենսորային էկրանի տեքստային հրահանգներին: Նախ՝

- էկրանին սեղմում եք **«Ծառայության վճարում»** կոճակը,
- ընտրում եք **«Բանկեր և վարկային կազմակերպություններ»** տողը,
- ընտրում եք **«Նորվիկ Կրեդիտ»,**
- Հերթականությամբ մուտքագրում եք Ձեր պայմանագրի վերջին ութ նիշերը, Ձեր անձնագրի համարը և սեղմում **«Առաջ»** կոճակը:
- Այնուհետև էկրանին կտեսնեք.

«Հերթական պարտքի ընդհանուր չափը»

«Միջնորդավճար»

«Մարման ենթակա ընթացիկ գումար»

«Ընդհանուր պարտքի գումարը»

«Հերթական պարտքի ընդհանուր չափը» այն գումարն է, որը Դուք պետք է մարեք հաջորդ ամսվա ընթացքում, **«միջնորդավճարը»**՝ Telcell-ի կողմից գանձվող գումարը, **«Մարման ենթակա ընթացիկ գումարը»**՝ այն գումարը, որն անհրաժեշտ է մուծել ընթացիկ ամսվա ընթացքում, **«ընդհանուր պարտքի գումարը»**՝ Ձեր պարտքն ամբողջությամբ:

Ուշադրություն. Եթե դուք ցանկանում եք հանդգնել, որ ներկայացվող տվյալներում վրիպումներ չկան, ապա սեղմեք **«Տեսնել մանրամասն տվյալներ»** կոճակը: Այնուհետև դրեք գումարը թղթադրամի ընդունիչի մեջ և սեղմեք **«Առաջ»** կոճակը, ինչից հետո տերմինալը Ձեզ կտրամադրի անդորրագիրը:

Համակարգի առավելությունները

Օրինակ 1. Եթե **«Մարման ենթակա ընթացիկ գումարը»** կազմում է 10600 դրամ, իսկ դուք թղթադրամի ընդունիչում դրել եք 11000 դրամ, ապա մնացած 400 դրամը կմարի հաջորդ ամիս վճարվելիք գումարի մի մասը: Իսկ եթե դուք կատարում եք Ձեր վերջին վճարումը, այսինքն ամբողջությամբ մարում եք «Նորվիկ» ՈՒՎԿ-ի նկատմամբ ունեցած Ձեր պարտքը, ապա տերմինալը Ձեզ կտրամադրի երկու անդորրագիր: Առաջինը՝ կիսատատի, որ դուք ամբողջությամբ մարել եք Ձեր պարտքը, իսկ երկրորդում նշված կլինի 18 նիշ ունեցող PIN-կոդը (ծածկագիր), որի շնորհիվ կկարողանաք ավելացված գումարը փոխանցել Telcell համակարգում առկա ցանկացած այլ օպերատորի՝ օրինակ ՎիվաՍելի Ձեր հաշվին (կամ ցանկացած այլ օպերատորի): Այս դեպքում անհրաժեշտ է մուտքագրել Ձեր բջջային հեռախոսի համարը, հետևել հրահանգներին, իսկ երբ էկրանին հայտնվի **«Գումարի մուտքագրում»** հրահանգը, Դուք կտեսնեք նաև **«Օգտագործել PIN կոդը»** տողը, սեղմեք այն և մուտքագրեք 18 նիշ ունեցող PIN կոդը: Ավելացված գումարը կփոխանցվի Ձեր բջջային հեռախոսի հաշվին, տերմինալը Ձեզ կտա անդորրագիրը:

Ուշադրություն. Դուք կարող եք օգտագործել 18 նիշ ունեցող PIN կոդը միայն այն տերմինալում՝ որտեղից ստացել եք անդորրագիրը: Նրա գործողության ժամկետն անսահմանափակ է:

Օրինակ 2. Եթե **«Մարման ենթակա ընթացիկ գումարը»** կազմում է 15000 դրամ« և Դուք թղթադրամի ընդունիչում դրել եք 15000 դրամ գումար« ապա ծրագիրը նախ կգանձի միջնորդավճարը« այնուհետև կմարի Ձեր պարտքը: Այս դեպքում Դուք կունենաք ժամկետանց պարտավորություններ և Ձեր վճարման գրաֆիկը կխախտվի:

Հարգելի հաճախորդներ, Ձեզ համար աշխատում է Telcell ընկերության հաճախորդների աջակցության ծառայությունը: Վճարումների հետ կապված ցանկացած հարցի դեպքում խնդրում ենք զանգահարել **010 21 97 07** հեռախոսահամարով:

Շնորհակալություն!!!